ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.01.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2022/07

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, 07.01.2022թ. թիվ 26/26-1/85-2022 գրությամբ «ПроБугал» ООО-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի 29.12.2021թ. թիվ 39/02-15-1038 գրության հիման վրա 07.01.2022թ. թիվ 26/26-1/85-2022 գրությամբ նախաձեռնել է «ПроБугал» ООО-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«ПроБугал» ООО-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«ПроБугал» ООО-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«ПроБугал» ООО-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/07 ընթացակարգի շրջանակներում 12.01.2022թ. ժամը 09:20-ին և 20.01.2022թ. ժամը 09:42-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 29.12.2021թ. թիվ 39/02-15-1038 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ 2021թ.ի դեկտեմբերի 21-ին, ՀՀ ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում տեղի է ունեցել գույքագրման ծառայության ձեռքբերման ԵՄ-ԳՀԾՁԲ-22/2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստը:

«ПроБугал» ООО-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝ սույն գնման ընթացակարգին մասնակցության հայտով ներկայացված թիվ 1 Հավելվածը հաստատված չէ: Համաձայն հրավերի 8.19 կետի՝ ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Ընկերության կողմից չի ներկայացվել իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր (Հավելված N 1.2):

Գնահատող հանձնաժողովը որոշեց 22.12.2021թ. նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և նույն օրը համակարգի միջոցով ծանուցմամբ առաջարկել «ПроБугал» ООО-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի

մայիսի 04-ին N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Գնահատող հանձնաժողովը արձանագրել է , որ «ПроБугал» ՕՕՕ-ի կողմից գնման ընթացակարգի հրավերում նշված էլեկտրոնային հասցեին սահմանված ժամկետում շտկված փաստաթղթեր չի ներկայացվել:

Վերոգրյալով պայմանավորված՝ Գնահատող հանձնաժողովը որոշեց «ПроБугал» ՕՕՕ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի ա) պարբերությամբ սահմանված պահանջները:

Համաձայն Կարգի 45-րդ կետով սահմանված պահանջների՝ «ПроБугал» ՕՕՕ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերը գրավոր ուղարկում ենք Ձեզ՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ սկսելու նպատակով:

Միաժամանակ հայտնում ենք, որ գնման ընթացակարգի շրջանակներում ձեռք բերվող գնման առարկաները ներառված են հաստատված գնումների պլանում և հրապարակված են տեղեկագրում»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/07 ընթացակարգի շրջանակներում 12.01.2022թ. ժամը 09:20-ին և 20.01.2022թ. ժամը 09:42-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/07 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/07 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից հայտարարվել է «ԵՄ-ԷԱՃԾՁԲ-22/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ПроБугал» ՕՕՕ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.01.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել

է, որ Ընկերության հայտում առկա են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝

-սույն գնման ընթացակարգին մասնակցության ***<u>հայտով ներկայացված թիվ 1 Հավելվածը հաստատված չէ:</u>*** Համաձայն հրավերի 8.19 կետի՝ ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակով:

-Ընկերության կողմից չի ներկայացվել իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր (Հավելված N 1.2):

3. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու և Ընկերությանն առաջարկելու մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկելու արձանագրված անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.12.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «ПроБугал» ООО-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ, այն հիմնավորմամբ, որ Ընկերությունը սահմանված ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

5. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստը՝ Ընկերության կողմից հայտով ներկայացված Հավելված 1-ը Պատվիրատուի կողմից չի ներկայացվել:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 07.01.2022թ. թիվ 26/26-1/85-2022 գրությունը, «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի 29.12.2021թ. թիվ 39/02-15-1038 և 03.01.2022թ. թիվ 39/02-15-01 գրությունները, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին,

3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 11-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է

հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ***<u>իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:</u>***

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Կարգի 45-րդ կետով սահմանվում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Այսպես, «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից հայտարարվել է «ԵՄ-ԷԱՃԾՁԲ-22/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ПроБугал» ООО-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.01.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ընկերության հայտում առկա են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝

-սույն գնման ընթացակարգին մասնակցության ***հայտով ներկայացված թիվ 1 Հավելվածը հաստատված չէ:*** Համաձայն հրավերի 8.19 կետի՝ ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակով:

-Ընկերության կողմից չի ներկայացվել իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր (Հավելված N 1.2):

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու և Ընկերությանն առաջարկելու մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկելու արձանագրված անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.12.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «ПроБугал» ООО-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ, այն հիմնավորմամբ, որ Ընկերությունը սահմանված ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստը՝ Ընկերության կողմից հայտով ներկայացված Հավելված 1-ը, որով կփաստվեր Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ կայացված որոշման իրավաչափությունը, Պատվիրատուի կողմից չի ներկայացվել:

Մինչդեռ՝ Կարգի 45-րդ կետով սահմանվում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ***տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով...***: Տվյալ դեպքում որպես հիմք հանդիսանում է Ընկերության կողմից հայտով ներկայացված Հավելված 1-ը՝ դիմում հայտարարությունը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ սույն ընթացակարգի նախաձեռնման նպատակով Ընկերության կողմից հայտով ներկայացված Հավելված 1-ը՝ դիմում հայտարարությունը Պատվիրատուի կողմից չներկայացնելու հետևանքով վիճելի է մնացել Ընթացակարգի

գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ կայացված որոշման իրավաչափության փաստը:

Միևնույն ժամանակ հարկ եմ համարում արձանագրել, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրությունը, որի համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է Ընկերության հայտում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, թվագրված է 22.01.2021թ., իսկ Պատվիրատուի կողմից սույն ընթացակարգի շրջանակներում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ Ընկերությանը eauction.armeps.am համակարգի միջոցով ծանուցելու փաստը հավաստող արտատպումից պարզ չի դառնում, թե Ընկերությանը ծանուցումը երբ է ուղարկվել, արդյունքում հնարավոր չէ փաստել Պատվիրատուի կողմից Կարգի 41-րդ կետով սահմանված դրույթի պահպանումը:

Ընդ որում՝ Կարգի 41-րդ կետով սահմանված դրույթները չպահպանելու դեպքում դրանք չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

Վերոգրյալով պայմանավորված, ինչպես նաև գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի բացակայության պայմաններում գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «ПроБуга» ՕՕՕ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 07.01.2022թ. թիվ 26/26-1/85-2022 գրությամբ «ПроБуга» ՕՕՕ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**